ՀՀ Սյունիքի մարզի Ագարակ քաղաքի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմայի անվանումը՝ ***Կրտսեր դպրոցականների ստեղծագործականության զարգացումը մանրապատում ստեղծագործությունների ուսումնասիրման միջոցով***

Ուսուցիչ՝ ***Լյուբա Խաչատրյան***

Վերապատրաստող դասընթացավար՝ ***Լուսինե Բալայան***

«Կապանի N 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ
/ վերապատրաստող կազմակերպության անվանումը /

ԱԳԱՐԱԿ 2023

Բովանդակություն

Ներածություն…….3

Գլուխ 1 : Ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների տեղն ու դերը մայրենիի դասագրքերում.....……5

Գլուխ 2: Հետազոտական մաս…….....7

Եզրակացություն……16

Հավելված……..17

Օգտագործված գրականության ցանկ……20

Կրտսեր դպրոցականների ստեղծագործականության զարգացումը մանրապատում ստեղծագործությունների ուսումնասիրման միջոցով

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ստեղծագործ մարդիկ երկրի ինտելեկտուալ հարստությունն են: Իսկ մարդու մտավոր կարողությունները ձևավորվում են նրա կրթության և դաստիրակության ընթացքում: Բնականաբար, այս գործում մեծ դեր ունի դպրոցը, որի հիմնախնդիրներից մեկն էլ երեխայի ստեղծագործ «ես»-ի զարգացումն է:

Ժողովրդական մանրապատումները մեծ դեր են խաղում աշակերտների խոսքի, երևակայության և տրամաբանական մտածողության զարգացման բառապաշարի հարստացման գործում, ճկուն են դարձնում նրա խոսքը, սրում են աշակերտի միտքը: Ժողովրդական մանրապատում ստեղծագործություններին՝ առածներին, ասացվածքներին, հանելուկներին, շուտասելուկներին, սուտասելուկներին, խնդուկներին երեխաները ծանոթանում են դեռևս առաջին դասարանից՝ գրաճանաչության շրջանից: Կարելի է ասել՝ աշակերտները մեծ սիրով և հետաքրքրությամբ են ուսումնասիրում մանրապատումները և ճշտորեն կարողանում վերլուծել: Մանրապատումները ուսուցիչը կարող է կիրառել յուրաքանչյուր դասանյութի համար՝ այն դիտարկելով որպես դասի լրացուցիչ և օժանդակ նյութ: Մանրապատում ստեղծագործությունները աշակերտներին միշտ սովորեցնում են, խրատում, զարգացնում տրամաբանությունը, ուշադրությունը, ինչպես նաև բանավոր կապակցված խոսքը:

Առածներն ու ասացվածքները թե՛ ձևով, թե՛ բովանդակությամբ իրար շատ են նման, սակայն բնույթով տարբեր են: Այդ տարբերությունը երեխաներին ընկալելի պիտի դարձնել գործնական ճանապարհով՝ առանց տեսական բացատրությունների պարզապես պիտի սովորեցնել գործնականորեն զանազանել առածներն ու ասացվածքներն, հանելուկներն ու շուտասելուկները:

Մայրենիի դասագրքերում զետեղված գրեթե յուրաքանչյուր բնագրի հետ դիտարկվում են ժողովրդական այդ պարզ, հակիրճ, բայց բովանդակալից ստեղծագործությունները, որոնք պարտադիր առնչվում են դասի հիմնական թեմային՝

որպես օժանդակ նյութեր և պարզաբանում, առավել ցայտուն են դարձնում ընթերցվող ստեղծագործության որևէ կողմը կամ խորացնում ու ամբողջացնում դրանց գլխավոր միտքը:

Մեր աշխատանքի **արդիականությունը** հիմնավորվել է վերը նշված հանգամանքներով:

Հետազոտության նպատակը

Մեր **նպատակն է՝** ներկայացնել ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների ուսումնասիրման մեթոդական համակարգը տարրական դպրոցում:

Մեր ուսումնասիրության **խնդիրներն** են՝

1. Ուսումնասիրել **հիմնախնդրի** վերաբերյալ առկա գրականություն և ներկայացնել դրանցում դիտարկված գիտամեթոդական սկզբունքները:
2. Դիտարկել ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների ուսումնասիրման գործընթացի առանձնահատկությունները մայրենիի դասի ընթացքում:
3. Ներկայացնել ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների ուսումնասիրման ուղղությամբ մեթոդական մշակումներ:

Հետազոտության մեթոդները

Ուսումնասիրության տարբեր փուլերում կիրառել ենք ուսուցման ավանդական և ժամանակակից տեխնոլոգիաներ՝

- համագործակցային, նախագծային, խաղային, տարբեր մեթոդներ՝
- զրույցներ, դիտումներ,
- դասալսումներ տարրական դպրոցում, վիկտորինաների անցկացում,
- մայրենիի դասագրքերի ուսումնասիրում, վերլուծություն:

Գլուխ 1

Ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների տեղն ու դերը մայրենիի դասագրքերում

Ժողովրդական մանրապատում ստեղծագործություններին՝ առածներին, ասացվածքներին, հանելուկներին, շուտասելուկներին, սուտասելուկներին և շփոթուկներին երեխաները ծանոթ են դեռևս առաջին դասարանից՝ գրաճանաչության շրջանից:

Ինչպես նշեցինք նախորդ գլխում, ժողովրդական մանրապատում ստեղծագործությունները տարրական դպրոցի մայրենիի դասագրքերում զետեղված են գեղարվեստական ստեղծագործությունների հետ միասին՝ որպես օժանդակ նյութ: Դրանք հիմնականում պարզաբանում են բնագրի այս կամ այն միտքը, ստեղծագործության գաղափարը կամ ենթատեքստը և ունեն ուսուցողական կարևոր նշանակություն:

● Շուտասելուկները զարգացնում են կրտսեր դպրոցականների արտասանական օրգանները, կարգավորում են խոսելու արագությունն ու տեմպը:

● Սուտասելուկները զարգացնում են երեխաներ վերլուծական- համադրական մտածողությունը, ուշիմությունը, ձևավորում հումորի զգացում, սրամտություն:

● Հանելուկների գուշակումն ու հյուսումը զարգացնում են երեխաների դիտողականությունը, տրամաբանական ու պատկերավոր մտածողությունը, հիշողությունը, հարստացնում են բառապաշարը, կատարելագործում են խոսքը:

● Առածներն ու ասացվածքները, որպես համառոտ, դիպուկ ու պատկերավոր խոսքի նմուշներ, նպաստում են երեխաների ոչ միայն լեզվի հարստացմանը, այլ նաև տրամաբանական ու պատկերավոր մտածողությանը:

Կարևորում ենք նշել, որ ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների ուսումնասիրումն ու դրանց հետ բազմապիսի ստեղծագործական առաջադրանքների կիրառումը կատարվում է ոչ միայն մայրենիի, այլև տարրական դպրոցում ուսումնասիրվող մյուս առարկաների դասերին ևս՝«Մաթեմատիկա», «Տեխնոլոգիա», «Ես և շրջակա աշխարհը», «Կերպարվեստ»: Այժմ անդրադառնանք տարրական

դասարանների մայրենիի դասագրքերում ընդգրկված ժողովրդական մանրապատում ստեղծագործություններին: Պարզելու համար, թե ինչ տեղ ունեն ժողովրդական մանրապատում ստեղծագործությունները տարրական դասարանների մայրենիի դասագրքերում՝ մենք դիտարկեցինք նրանցից յուրաքանչյուրն այդ տեսանկյունից:

Գլուխ 2

Հետազոտական մաս

Մենք ուսումնասիրության ժամանակ պայմանավորված փորձարարական դպրոցում գործածվող դասագրքերով, ուսումնասիրել ենք հետևյալ դասագրքերը՝

«**Այբբենարան**» հեղինակներ՝ Ա. Քյուրքչյան, Լ. Տեր-Գրիգորյան, 2017թ.:

«**Այբեննարան**» հեղինակ՝ Վ. Սարգսյան, 2013թ.:

«**Մայրենի 1**» հեղինակներ՝ Քյուրքչյան Ա., Տեր Գրիգորյան Լ., Այբբենարան, Եր. 2010:

«**Մայրենի 1**» հեղինակ՝ Սարգսյան Վ.,Եր. 2013:

«**Մայրենի 2**» հեղինակներ՝ Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ.,Եր. 2010:

«**Մայրենի 2**» հեղինակներ՝ Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Գրիգորյան Ս., Եր. 2010:

«**Մայրենի 3**» հեղինակներ՝ Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Թորոսյան Կ., Ջիլավյան Ե., Եր., 2009:

«**Մայրենի 4**» հեղինակներ՝ Կ. Թորոսյան, Վ. Ա. Սարգսյան, Հ. Խաչատրյան, Կ. Չիբուխչյան, Եր., 2009:

«**Մայրենի 4**» հեղինակներ՝ Գյուրջինյան Դ., Հեքեյան Ն.:

1-4-րդ դասարանի մայրենիի դասագրքերում գեղարվեստական բնագրերի նկարներից ներկայացված են առածներ, ասացվածքներ, հանելուկներ, շուտասելուկներ, սուտասելուկներ: Դրանց ընտրությունն առաջին հերթին պայմանավորված է այն ստեղծագործության բովանդակությամբ, գաղափարով կամ ենթատեքստով, որը նախատեսված է ուսումնասիրության համար, պայմանավորված է նաև աշակերտների տարիքային առանձնահատկություններով, մտածողության ձևերով և մակարդակներով, նրանց ճանաչողական հետաքրքրություններով, ընկալման կարողություններով:

Ըստ ուսումնասիրման նպատակի՝ դասարանից դասարան դրանք փոփոխվում են և դառնում բազմատեսակ ու բազմախնդիր:

Տարրական դասարանների մայրենիի դասագրքերում բնագրին կից տրված են լինում բնագրի (ոչ բոլոր բնագրերին) գաղափարը, ենթատեքստն ու բովանդակությունը արտահայտող առած ասացվածքներ:

Հաճախ միևնույն բնագրին կից տրված է նույն բովանդակությունն արտահայտող մի քանի առած, ասացվածքներ: Բնագրերին կցված տրված հանելուկների ընտրությունը պայմանավորված է ուսումնասիրվող ստեղծագործությունների բովանդակությամբ, գլխավոր կերպարով, իրով, երևույթով, առարկայով և տրված են բնագրից կից առկա խաչբառում, նաև թեմայի ամփոփման դասերում:

Թեմատիկ խմբերի ամփոփման դասերի ժամանակ դասագրքերում տրված են նաև առածներին, ասացվածքներին, հանելուկներին առնչվող առաջադրանքներ, որոնք նպաստում են ոչ միայն նրանց իմաստների ըմբռնմանը, այլև ստեղծագործական կարողությունների զարգացմանը: Դիտարկենք մի քանի օրինակ՝

1. **Ո՞ր բնագրի վերնագիր կդարձնեիր տրված առածը. «Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք»**
   - «Արան ու Շարան»,
   - «Պատմվածքը ընթերցող էր փնտրում»,
   - «Արջն ու գիրքը»,
   - «Գիրք»,

2. **Ամբողջացրո'ւ տրված անավարտ առածները:**

   Գլխիցդ մեծ … մի' բռնիր: (կենդանի, գործեր, բարիքներ)

   Լավ ընկերը … ժամանակ է երևում: (աշխատանքի, ուրախության, նեղության)

3. **Առածները «քանդվել» են:**

   «Հավաքի'ր» և գրի'ր տետրում:

   Ճամփան, Ջուրն, իր, կգտնի

   Հացը, մեծ,Հարևանի, երևում, է

4. **Խմբավորի'ր տրված առածներն ըստ իրենց ընդհանրացնող իմաստների:**

Երախտամոռություն, ժլատություն, աչքածակություն
Անհավատարմություն ագահություն

1. Սառած օձը առաջ տաքացնողին կկծի:
2. Մութ տեղը մազ մանող է:
3. Հավի պես կուտի, կտուցը գետնին կքսի:
4. Շատի հետևից ընկնողը, քչից էլ կզրկվի:
5. Մեջտեղն ուտում է, բոլորը՝ պտտվում:

5. **Որոշի՛ր՝որ առածն է այս խմբում ավելորդը** և այլն:

Ջրի բերած՝ ջրի տարած:

Դառը քրտինքի բերածը ուղտի պոչ է. չի երկարի:

Ես գանձ կասեմ, նա տանձ կհասկանա:

Մենք ուսումնասիրեցինք 1-4-րդ դասարանների մայրենիի դասագրքերը և բացահայտեցինք, որ դասարանից դասարան ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների ընդգրկվածությունն աճում կամ նվազում՝ համապատասխանելով տվյալ տարիքի աշակերտների կարողություններին, հետաքրքրություններին:

Այսպես, առածներ առաջին դասարանում չեն ուսումնասիրվում, քանի որ դրանք աշակերտների համար իմաստային տեսանկյունից դժվար ընկալելի են: Մայրենի 1 դասագրքում ընդգրկված է 12 (0) երկրորդ դասարանի դասագրքում ընդգրկված է ընդամենը 2 (19) առած, երրորդում 13, չորրորդում՝21 (12): Սակայն մեր պարապած դասերի ժամանակ բացահայտեցինք, որ 2-րդ դասարանում միայն երկու առածի ուսումնասիրումը քիչ է: Այդ մասին ասացին նաև դասվարները:

Ասացվածքը, ի տարբերություն առածի, ունի միայն ուղիղ իմաստ, այդ իսկ պատճառով՝ հենց առաջին դասարանից երեխաները ծանոթանում են ևս ասացվածքների հետ: Մայրենի 1 դասագրքերում 9 (1), երկրորդ դասարանում դրանց քանակն աճում է՝ հասնելով 15 (6)-ի, երրորդում՝2, չորրորդում՝ 15(2): Ինչպես տեսնում ենք ըստ դասաարանների ասացվածքների բաշխման համաչափությունն այնքան էլ տրամաբանական չէ:

Հանելուկն այն ժանրն է, որը հավասարապես հետաքրքիր է մեծերի և փոքրերի համար: Հանելուկը հեռվից հեռու ակնարկելով առարկայի ինչ-որ հատկանիշ, իրական առարկաներն ու երևույթները քողարկելով, դիմակավորելով դժվար գուշակելի պատկերներով, դառնում է ակտիվ մտավարժանք, համեմատման ու հակադրման, էականը գտնելու, վերլուծելու, սրամտության ու պատկերավոր մտածողության զարգացման արդյունավետ միջոց: Սա է պատճառը, որ դասագրքերում շատ կան հանելուկներ: Հանելուկներ աշակերտները գուշակում են դեռևս նախադպրոցական տարիքից, և այբբենարանում դրանց քանակը հասնում է՝16-ի(14), Մայրենի 1 դասագրքերում 9 (34), երկրորդում՝ 52 (27)-ի, երրորդում՝ 8-ի, չորրորդում՝ 29 (8)-ի (դրանք սերտորեն առնչվում են ուսուցանվող բնագրին):

Հաշվի առնելով շուտասելուկի գլխավոր նպատակը (երեխաների արտասանական օրգանների վարժեցում, հնչյունային լսողության զարգացում և արտասանական թերությունների վերացում)՝ դրանց առավելագույն ընդգրկվածությունն այբբենարանում հիմնավորված է: Քանակը՝ 17 (12), մայրենի 1 6 (7), երկրորդ դասարան՝ 5, երրորդ դասարան՝ 1, չորրորդ դասարան՝ չկա (1):

Դասագրքերում մեծ տեղ է հատկացված հումորին, երեխաների հումորի զգացումը զարգացնելուն և ձևավորելուն: Բավականին շատ են հումորով, զվարճալիքով լի բնագրային նկարազարդումները, առանձին կատակային նկարները, անհեթեթություններով ու սխալներով լի զվարճալի նկարները: Դրանք նաև արտահայտվում են հանելուկներում, շուտասելուկներում, խնդուկներում, նկարելուկներում, հաշվելուկներում և այլն: Սուտասելուկներ ուսումնասիրվում են առաջին և երկրորդ դասարաններում:

Կարծում ենք, որ այնուամենայնիվ, սուտասելուկների քանակը դասագրքերում սակավ է: Մեր կարծիքով, ավելի մեծ թվով սուտասելուկներ կարելի է զետեղել մայրենիի դասագրքերում՝ նկատի ունենալով տարիքային առանձնահատկությունները, քանի որ դրանք մեծապես նպաստում են սովորողների մտածողության և հոգեկան բոլոր գործընթացների զարգացմանը:

Տարրական դպրոցի ուսուցիչների հետ անցկացրած մեր հարցազրույցի ժամանակ պարզեցինք, որ աշակերտներին ոչ միայն դուր են գալիս սուտասելուկների շուրջ աշխատանքը, և իրենք հաճույքով տարբեր գրքերից ձեռք են բերում դրանք ու

գործածում դասի ժամանակ, այլև սիրում են սուտասելուկներ հյուսել: Հիմնավորումը մեկն է. սուտասելուկները միայն աշխուժացնող հնարներ չեն: Դրանք զարգացնում են երեխաների տրամաբանական մտածողությունը:

Մայրենիի դասագրքերում գործածված են նաև խնդուկներ, որոնք երեխաներին ոչ միայն դուր են գալիս, զվարճացնում, այլև նպաստում սուր մտածողության ձևավորմանը: Սակայն, ցավոք խնդուկներին մայրենիի դասագրքերում մեծ տեղ տրված չէ:

Մենք մշակել ենք և առաջարկում ենք ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների ուսումնասիրմանը վերաբերող առաջադրանքների, խաղերի համակարգ, որը կարելի է կիրառել տարրական դպրոցում՝ աշակերտի ստեղծագործական կարողությունները, մտածողության տեսակները և խոսքը զարգացնելու նպատակով:

Առածներն ու ասացվածքները մայրենի լեզվի դասագրքերում զետեղված են գեղարվեստական ստեղծագործությունների հետ միասին՝ որպես օժանդակ նյութ, պարզաբանում են բնագրային այս կամ այն միտքը՝ հիմնականում կապված լինելով ստեղծագործության գաղափարի կամ ենթատեքստի հետ:

Մենք գտնում ենք, որ շահեկան է դրանց անգիր սովորելը և անհրաժեշտության դեպքում տեղին գործածելը: Այդ նպատակով հատուկ աշխատանք է իրականացվում՝ հաճախակի աշակերտներին ասել, թե որ առածը և ասացվածքը կարելի է կիրառել իբրև ընթերցվող պատմվածքի կամ հեքիաթի, առակի կամ բանաստեղծության վերնագիր, վերջաբան:

Երեխաներն իրենց խոսքում ճիշտ և տեղին են գործածում առածն ու ասացվածքը, նշանակում է՝ նրանք հասկացել են դրանց իմաստները:

Երեխաներին հանձնարարում են հասանելի դարձնեն առածի առաջին՝ ուղղակի իմաստը:

Օրինակ՝ **Երկաթը տաք-տաք կծեծեն** առածը երեխաները ընկալում են հենց այդպես՝ քանի դեռ տաք է, հեշտ է նրան կռելը:

Այնուհետև պահանջում եմ ներկայացնել առածի այլաբանական իմաստը՝ ասելով դրա անուղղակի մեկնաբանությունը՝ **այսօրվա գործը վաղվան չեն թողնի**:

Մեր մանկավարժական պրակտիկայի ընթացքում վարած մայրենիի դասերի ընթացքը վերլուծելիս համոզվեցինք, որ առածների ու ասացվածքների ըմբռնման ուղղությամբ բոլոր դասարաններում էլ անհրաժեշտ է մեկնաբանող, վերլուծական աշխատանք իրականացնել:

Ժողովրդական մանրապատում ստեղծագործությունները կիրառվում են ոչ միայն մայրենիի դասագործընթացում, այլև մյուս առարկաների՝ ստեղծելով միջառարկայական կապ: Թե' մաթեմատիկա, թե' ես և շրջակա աշխարհը, թե' տեխնոլոգիա, թե' կերպարվեստ առարկաներ դասերին ըստ նպատակի գործածվում են ժողովրդական մանրապատում ստեղծագործություններ: Օրինակ առաջին դասարանում մաթեմատիկայի դասերին թվերի ուսուցման ժամանակ աշակերտների հետ ուսումնասիրում էինք թվերի վերաբերյալ առածներ և հանելուկներ: Քանի որ հայերենում կան բազմաթիվ առածներ և ասացվածքներ, որոնց մեջ նաև օգտագործված են թվեր: Թվերի ուսումնասիրման ժամանակ մենք աշակերտներին հանձնարարում էինք որոնել առած-ասացվածքներ, որոնց մեջ գործածված են թվեր և դասարանում միասին քննարկում, մեկնաբանում էինք այդ առածներում և ասացվածքներում թաքնված գաղափարներ: Ինչպես՝ «Մեկ կա հազար արժե, հազար կա մեկ չարժե», «Մեկ խելքը լավն է, երկուսն՝ ավելի», «Մեկ ձեռքը ծափ չի տա», «Կրիան հազար ձու է ածում՝ մարդ չի իմանում, հավը մեկն է ածում, բոլորն իմանում են», «Մեկ անգամ ստեցիր, էլ քեզ չեն հավատա», «Մեկ նավը երկու նավապետ չի ունենա», «Մեկ ձեռքը ձեռք է լվանում, երկու ձեռքը՝ երես», «Գիտուն աղվեսը երկու ոտքով է թակարդն ընկնում», «Լավ աղջիկը երկու վատ տղա արժե», «Երկու նապաստակի ետևից ընկնողը ոչ մեկին չի բռնի», «Մեկ ոչխարից երկու մորթի չես հանի», «Տասներկու աշխատավոր մի վերմակի տակ հաշտ կքնեն, երկու թագավոր մի երկրում հաշտ չեն ապրի», «Ուզողի մի երեսն է սև, չտվողի՝ երկուսը», «Յոթ վարդապետ մի աղջիկ կնքեցին, անունը դրին՝ Կիրակոս», «Յոթ չափիր, մեկ կտրի'ր», «Արջը յոթ երգ գիտի, յոթն էլ տանձի մասին», «Երբ տաս բան գիտես, մեկն ասիր, ինը պահիր», «Մեկ խոսիր, տասը լսիր» և այլն:

Բնագրերն ուսումնասիրելիս աշակերտներին հանձնարարում ենք նկարազարդել բնագրին կից առածների ուղիղ և այլաբանական իմաստները: Ներկայացնենք աշակերտների նկարների մի քանի օրինակ: Օրինակ «Երկաթը տաք-

տաք են ծեծում» առածի ուղիղ իմաստը նկարազարդելիս աշակերտները նկարել են կրակ և դարբին, որի ձեռքին կա երկաթ և կրակի մոտ տաքացնում է երկաթը: Իսկ փոխաբերական իմաստը նկարելիս աշակերտները նկարել են վիճող ընկերների: Ըստ քայլերի սկզբում նրանք վիճում են, ընդհանուր հայտարարի չեն գալիս, հետո հասկանում են իրենց սխալը հենց վեճի ժամանակ և հաշտվում:

Տրված առածի երկու իմաստները՝ ուղիղ և այլաբանական, ցույց տո'ւր նկարի միջոցով:

Ամռանը պառկես հովերը, ձմռանը սատկեն կովերը:

Ներկայացնենք աշխատանքի արդյունքները դիագրամի տեսքով, որտեղ նշված է 2-րդ, 3-րդ և 4-րդ դասարանի աշակերտների նկարների արդյունքները, թե դասարանում քանի աշակերտ է կարողացել ընկալել և ճշգրտորեն արտահայտել առաջադրանքի բովանդակությունը, քանիսը կիսով չափ և քանի աշակերտի մոտ չի ստացվել:

Գծագրից երևում է, որ դասարանից դասարան աճում է առաջադրանքը լիարժեք կատարողների քանակը: Հաշվի առնելով առածի ուսումնասիրման առանձնահատկությունները՝ 2-րդ դասարանի աշակերտների աշխատանքի արդյունքները սպասվածից ավելի էին: 16 աշակերտ կարողացել էր արտահայտել առածի և' ուղիղ, և ' փոխաբերական իմաստները, ինչն այս տարիքի երեխաների համար սովորաբար մեծ դժվարություն է ներկայացնում: Բացի առածների նկարազարդումից, առածներն ուսումնասիրելիս աշակերտներին հանձնարարում էինք.

Առաջադրանք – Ըստ տրված առածի մտքի հյուսելփոքրածավալ պատմություն:
Այս հանձնարարությունը տվեցի մեր դպրոցի 3-րդ և 4-րդ դասարաններում:
Աշակերտները հյուսեցին ամբողջությամբ առածի միտքն արտահայտող պատմություններ: Այս աշխատանքի արդյունքում նրանք ոչ միայն հասկանում, իմաստավորում էին առածի երկու՝ ուղիղ և այլաբանական իմաստները, այլև երևակայության թռիչքի, մտքի ստեղծագործականության, մտածողության միջոցով հյուսում պատմություն՝ կապելով կյանքի, իրական աշխարհի իրադարձությունների հետ:

Քարտային աշխատանք՝ «Մաթեմատիկան և առածները»

Նպատակը՝ Աշակերտների գիտելիքների կրկնություն, ամրապնդում միջառարկայական կապի միջոցով:

Երկրորդ դասարանում կազմակերպեցին քարտային աշխատանք ՝ ստեղծելով միջառարկայական կապ՝ մայրենի և մաթեմատիկա առարկաների միջև: Մայրենիի դասերին ուսումնասիրվող առածների և մաթեմատիկայի գումարում հանում, բազմապատկում, բաժանում թեմաների համատեղ ուսումնասիրում:

Քայլ 1՝ Քարտերի մի երեսին գրված էր առածի մի մասը, իսկ մյուս երեսին նշված գործողություններով որևէ արտահայտություն, որի արժեքը տրված չէր, իսկ

մյուս քարտեր վրա նույն սկզբունքով տրված էր առածների շարունակությունը և նույն արժեքն ունեցող արտահայտություն:

Քայլ 2՝ Երեխաները կարդում էին առածը (եթե առածի առաջին մասն էր իրենց մոտ) կամ արտահայտությունը, եթե չէին կարողանում ճիշտ ասել արտահայտության արժեքը, բարձրաձայն կարդում էին իրենց քարտում նշված առածը, իսկ ում քարտում առկա էր շարունակությունը նայում էր իր մոտ եղած մաթեմատիկական արտահայտությունը և ասում արժեքը , երկու քարտում էլ նույն արժեքն էր տրված:

Քայլ 3 Զույգերը միասին մեկնաբանում էին իրենց քարտերում նշված առածի իմաստները և մեկնաբանում մաթեմատիկական արտահայտությունները: Այսպես ամբողջ դասարանը մասնակցում էր: Ստորև ներկայացված են քարտերի և քարտային աշխատանքի լուսանկարները:

Եզրակացություն

Ժողովրդական բանահյուսությունը ազային հոգևոր արժեքի մի մասն է, որը սերնդեսերունդ փոխանցվելով, հասել է մինչև մեր օրեր: Ժողովրդական բանահյուսությունը ունի կրթադաստիրակչական նշանակություն:

Հետազոտությունը ցույց տվեց, որ.

- բանահյուսության խաղերը դաստիարակում են խելացի, հնարամիտ սերունդ, որը ճիշտ է կողմնորոշվում կյանքում, սովորում է համագործակցելու ունակություն:
- հմայիչ խաղերն ու զրույցները երեխաներին հաղորդակից են դարձնում հայրենի երկրի ու ժողովրդի խնդիրներին:
- ժողովրդական բանահյություան ժանրերը երեխայի կյանքում կարևոր դեր են խաղում, ունեն ուսուցողական և ճանաչողական դեր:
- բոլոր ժամանակներում էլ խաղը կարևոր դեր է ունեցող երեխայի կյանքում:
- ժողովրդական բանահյուսության ժանրերի միջոցով բացահայտվում են երեխաների կենդանի խառնվածքները:
- ժողովրդական բանահյություան նմուշները իմաստուն ու կենսուրախ են:
- ժողովրդական բանահյություան նմուշները ներդաշնակում են երեխաների հմտությունների աշխարհին, հնարավորություն տալիս նրանց ճաշակի ձևավորմանը, գեղեցիկի ընկալմանը:
- դրանք նաև սովորեցնում են նաև հնարամտություն և ճարպկություն:

Հավելված

Սիրով Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում «Մայրենի» առարկայի շրջանակներում 2-րդ դասարանի աշակերտների կողմից ստեղծված հանելուկների գիրքը:

Այն ի՞նչն է, ինչը՞
Ունի և՛ պլանշետը,
և՛ հեռախոսը,
Եվ հեռուստացույցը:

դոմիՀ

Այն ի՞նչ ն է, ինչը՞
Պոչը փշոտ է,
Ինքը կարմիր է,
Հոտն անուշ է:

եմոԻ

Այն ի՞նչն է, ինչը՞,
Մեքենան առանց դրա չի գնա:
Կլոր է, անիվը չէ,
Շարժվում է, վարորդը չէ:

ԻՀՆ



Այն ի՞նչն է, ինչը՞,
Փոքրիկ է, կլոր է,
Կարող եմ իրար միացնել,
Կդառնա վզնոց,
Կդառնա թևնոց,
Իսկ թե երեք տառը հանեմ,
Կդառնա կենդանի:

ժդուեԻՍ

Դա գալիս է գիշերվա մեջ
Երբ մենք քնում ենք,
Փակ աչքերով դա տեսնում ենք:

եոմՁ

Գլխին կլոր գլխարկ ունի,
Վրան սպիտակ կետեր ունի:

ԻդեսՈ

Այն ի՞նչն է, ինչը՞,
Թափվում է ծառերից,
Ձյունը չէ,
Լինում է աշնանը,
Միրգը չէ:

դմՁՏ

Բրդոտ ու մեծ կենդանի է,
Ունի թաթեր ու մեծ որջ,
Շատ է սիրում ուտել մեղր
Ու քնում է ողջ ձմեռ:

ՇմՈ

Այն ի՞նչն է, ինչը՞,
Երբ գալիս է ձյուն,
Մենք վրան ենք նստում
Ու արագ սահում:

ԻոդզոՈ

Այն ո՞վ է, այն ո՞վ,
Մեզ համար գուլպա գործում,
Մեր մայրիկին է օգնում:

ԻվտոՏ

Գունավոր է , մի թռչուն
Ամբողջ ամառ է թռչում,
Մեր խոսքերը կրկնում:

կոճակ

Այն ի՞նչն է , ինչը՞ ,
Ձմեռ պապին է բերում ,
Ու թռչում է երկնքում ,
Դա սահնակը չէ :

կվդնզ

Այն ի՞նչն է , ինչը՞ ,
Մեզ գիշերը լույս է տալիս ,
Իսկ ցերեկը դաս է տալիս:

դվուսղ

Այն ո՞վ է , այն ո՞վ ,
Տղա է մեզ հարազատ ,
Մեր ընկերը չէ,
Ապրում է մեր տանը ,
Մեր հայրիկը չէ :

մմոժնզ

Խնդուկ

Վարորդը գնում է խանութ, էնտեղ է լինում նաև մի բժիշկ. բժիշկն ասում է.
- Վարորդ ջան, դու կարծես քո տեղում չես, վարորդը պետք է ճանապարհին լինի:

Հանելուկները պատրաստեցին IIբ դասարանի աշակերտները:

1. Բեկլարյան Աերլի
2. Բեգլարյան Նարեկ
3. Բոլյան Մարգար
4. Դավթյան Բորիկ
5. Խաչատրյան Նարեկ
6. Խաչատրյան Մանվել
7. Խաչատրյան Լաուրա
8. Խաչատրյան Սվետլաննա
9. Խեբոյան Ժաննա
10. Կարապետյան Ալեքս
11. Հովհաննիսյան Մարկ
12. Մարգարյան Հայկ
13. Մկրտչյան Լիլի
14. Մովսեսյան Դավիթ
15. Պետրոսայն Աստղիկ
16. Պողոսյան Աշոտ
17. Վարդանյան Նանե

Դասվար՝ Լյուբա Խաչատրյան

Օգտագործված գրականություն

1. Ասատրյան Լ., Կարապետյան Ն., Ես և շրջակա աշխարհը ինտեգրված դասընթացի դասավանդման մեթոդիկա, ուսումնամեթոդական ձեռնարկ, Եր., Արտագերս, 2016,226 էջ:
2. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., Զանգակ, 2015, 316 էջ:
3. Գյուրջինյան Դ., Հեքեյան Ն., Մայրենի 4, Եր., Էդիթ Պրինտ, 2015: